


Նարինե Միրզոյան, Միքայել Միրզոյան



Նկարիչ՝ Տիգրան Ամյան

Նկարազարդ, ուսուցողական  
մատենաշար 3-6 տարեկան  
երեխաների համար

ԿՄԻՔ ԳՐԱԴԱՐԱՆ  
2012

ԳԻՐԲ 3

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	3
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ .....	4
ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐ .....	6
ՄՆԿԵՐ .....	7
ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ .....	8
ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ .....	9
ՈՍԿՐԵՐ, ՀՈՂԵՐ ԵՎ ՄԿԱՆՆԵՐ .....	10
ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ .....	12
ՇՆՉԱՌԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ .....	13
ԶԿԱՐՃԱՆԻ ԽԱՂԵՐ .....	14
ԽԱՂ «ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ» .....	15
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ .....	16
ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ .....	18
ԿԱՅՆԱՍՈՒՄՆԵՐ .....	20
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՆՑ ՔԱՎԱԿԱՅՐԵՐԸ .....	22
ԱՆԱՊԱՏ .....	24
ՏՈՒՆԴՐԱ .....	26
ԽԵՆՈՔ ԽԱՂԵՐ .....	27
ՄԻՋԱՏՆԵՐ .....	28
ՄԱՐԴԱԿԵՐՊԵՐ .....	29
ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ .....	30
ՍՈՂՈՒՆՆԵՐ .....	31
ԹՈՉՈՒՆՆԵՐ .....	32
ԶԿՆԵՐ .....	34
ԶԿՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆՆԵՐԸ .....	36
ՕԳՆԻՐ ԶԿՆՈՐՍ ԿԱՏՎԻՆ .....	37
ԳԱՅՆԵՐ .....	38
ՇՆԵՐ .....	39
ՊԱՀԱԿՆԵՐ .....	40
ԽԱՂ «ՄԱՐՉԵՆՔ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ» .....	41
ԽԻՉԱԽՆԵՐ ԵՎ ՎԱԽԿՈՏՆԵՐ .....	42
ՄԱՐԴՈՒ ԼԱՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	44
ՄԱՐԴՈՒ ՎԱՏ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	46
ԵՂԻՐ ԶԳՈՒՅՇ .....	47

## ՄԻՋԱՆՆԵՐ

Նայիր այս նկարին: Տեսնո՞ւմ ես, ինչքան միջատներ են այստեղ հավաքվել: Եղանակն այնքան տաք է, որ միջատները դուրս են եկել ջերմանալու ու սնվելու:

Արի՛ մենք էլ առիթը բաց չթողնենք և ծանոթանանք միջատներին: Միջատները բազմատեսակ են, սակայն, միևնույն է, ունեն վեց ոտք ու զույգ բեղեր: Իսկ շատերն ունեն նաև մեկ կամ երկու զույգ թռչող թևիկներ:

Գրեթե բոլոր միջատները փոքրամարմին են, բայց բավական շատակեր: Պատկերացնո՞ւմ ես, ճպուռը մեկ օրում ուտում է այնքան կեր, որքան ինքն է կշռում:

Միջատները շատ ճարպիկ են: Հավանաբար դու էլ ես տեսել, թե ինչպես են մրջյուններն իրար հետևից արագ-արագ վազում վերևներքև, աջ ու ձախ: Նույնիսկ առաստաղի վրա «շտապում» են այնպես, ինչպես կվազեին գետնի վրա:

ճպուռներն ամենաարագ թռչող միջատներն են:



## ԱՆՈՊՈՏ



Անապատը հսկայական չոր տարածք է, որտեղ ջուր գրեթե չկա: Իսկ դու գիտե՞ս, բարեկամս, ես եղել եմ անապատում: Ուր նայում ես՝ միայն ավազային ալիքաձև թմբեր են: Երբ շուրջդ այդքան շատ ավազ է, թվում է՝ անապատն անսահման է ու չքնակեցված: Սակայն իրականում այդպես չէ: Այստեղ հանդիպում եմ և՛ բույսեր, և՛ կենդանիներ, բայց միայն այն տեսակները, որոնք կարող են դիմակայել անապատի խիստ պայմաններին:

### սաքսաուլ



Ջուրն անապատում բավական խորն է, հետևաբար շատ բույսերի համար անհասանելի է: Սաքսաուլն այն եզակի բույսերից է, որի երկար արմատներն ի վիճակի են ջուր «հայթայթել» նաև խորքերից:

Անապատում լավ են աճում նաև կռզիները (կակտուսները): Դրանց ցողունները շատ հյութալի են, իսկ տերևները ձևափոխվել են փշերի:



կռզի

Անապատի ամենահայտնի կենդանիներն ուղտերն են, որոնց հեշտությամբ կարելի է ծանաչել սապատի շնորհիվ. Ուղտերը սնվում են ուղտափշով: Ձարմանալի է, թե ինչպես են ուղտերը ծամում այս փշոտ բույսը ու նույնիսկ աչքերն էլ չեն թարթում:

Դեռ շատ հինոց մարդիկ ուղտերին ընտելացրել են և դարձրել իրենց հավատարիմ օգնականները: Սրանց օգնությամբ մարդիկ տեղաշարժվում են, բեռներ տեղափոխում, դրանց բրդից հագուստ են գործում և այլն: Իսկ որքան համեղ է ուղտի կաթը:

### քարավան



Ուղտերը շատ դիմացկուն կենդանիներ են, երկար ժամանակ կարող են ապրել առանց կերի ու ջրի: Ուղտերը հարթահարում են ծաբավն ու սովը սապատների մեջ կուտակված ժարպի շնորհիվ: Նիհարած ուղտի սապատը թեքվում է կողքի: Պատկերացնո՞ւմ ես, հասնելով ջրին՝ ուղտը կարող է միանգամից 8-10 դույլ ջուր խմել: Այս կենդանիները հագեցնում են նույնիսկ առի ջրով:

Անապատում ապրում են նաև զանազան թռչուններ, սողուններ ու միջատներ:

Ցերեկն այստեղ արևն այնքան ուժեղ է տաքացնում, որ կենդանիները թաքնվում են իրենց բներում և դուրս են գալիս վաղ առավոտյան կամ էլ մայրամուտին:

Ինչպես գիտես, ջուրն անապատում բավական քիչ է: Ահա թե ինչու շատ կենդանիներ սովոր են ապրել առանց ջրի: Այսպես, դեղին գետնասկյուռն ու ժագարամուկը բավարարվում են միայն սննդի մեջ եղած ջրով:

**Երկսապատավոր ուղտ**

**Միասապատավոր ուղտ**



Եթե ջուրն անապատում այդքան քիչ է, ապա ինչպե՞ս են մարդիկ ապրում այստեղ: Մարդը, իրոք, կարող է ապրել միայն այնտեղ, որտեղ ջուր կա, իսկ այդպիսի վայրեր անապատներում կան: Դրանք կոչվում են օազիսներ: Հենց այսպիսի ջրառատ վայրերում էլ մարդիկ բնակվում են: